ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/11-1

ք. Երևան «24» սեպտեմբերի 2020թ.

ՀՀ դատախազությունն ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Նավասարդյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ազատյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը.

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 32182848 (երեսուներկու միլիոն հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր քառասունութ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի [illegible]տմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, [illegible]այն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (շահույթներ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 17 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ դատախազություն	**Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ**
ք.Երևան, Վ.Սարգսյան 5	**ք. Երևան, Զ. Սարկավագի 157**
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.	**«Արարատբանկ» ԲԲԸ**
Հ/Հ 900011180081	**Հ/Հ 1510023294810100**
ՀՎՀՀ 02506634	**ՀՎՀՀ 00803554**
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

«24» սեպտեմբերի 2020 թ.
N ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/11-1 ծածկագրով պայմանագիր

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

ավերով ատեսվա ծ աբաժնի ամարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ապրանքայի ն նշանը, մակիշը և արտադրողի անվանումը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատակարարման		
								հասցեն	ենթակա քանակը	Ժամկետը***
1	18211100/1	**Կիսավերարկու**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	հատ	60000	4980000	83	ք. Երևան	83	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
2	18211100/2	**Կիսավերարկու**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	հատ	59647.06	1014000	17	ք. Երևան	17	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
3	18221400/1	**Անջրանցիկ վերարկու**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	հատ	30000	2490000	83	ք. Երևան	83	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
4	18221400/2	**Անջրանցիկ վերարկու**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	հատ	30000	510000	17	ք. Երևան	17	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
6	18231210/1	**Կիտել-կիսաշրջազգեստ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	լրակազմ	45000	2700000	60	ք. Երևան	60	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
7	18231210/2	**Կիտել-կիսաշրջազգեստ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	լրակազմ	49998	849966	17	ք. Երևան	17	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
8	18231400/1	**Տաբատներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	հատ	16998	169980	10	ք. Երևան	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
10	18231410/2	**Կիտել-տաբատ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	լրակազմ	90000	900000	10	ք. Երևան	10	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.

11	18231410/3	**Կիտել-տաբատ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	լրակազմ	49998	4149834	83	ք. Երևան	83	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
12	18331200/1	**Վերնաշապիկներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	հատ	4998	3468612	694	ք. Երևան	694	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
13	18331200/2	**Վերնաշապիկներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	հատ	4998	559776	112	ք. Երևան	112	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
14	18331200/3	**Վերնաշապիկներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	հատ	4500	3123000	694	ք. Երևան	694	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
15	18331200/4	**Վերնաշապիկներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	հատ	4500	504000	112	ք. Երևան	112	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
16	18421110/1	**Շարֆեր**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	հատ	2496	249600	100	ք. Երևան	100	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
17	18421120/1	**Փողկապներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	հատ	3498	1199814	343	ք. Երևան	343	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
18	18421120/2	**Փողկապներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	հատ	6996	27984	4	ք. Երևան	4	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
19	18421120/3	**Փողկապներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	հատ	3498	195888	56	ք. Երևան	56	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
20	18421170/1	**Գոտիներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	հատ	5496	1885128	343	ք. Երևան	343	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
21	18421170/2	**Գոտիներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	հատ	9996	39984	4	ք. Երևան	4	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 10.12.2020թ.
22	18421170/3	**Գոտիներ**	Քանաքեռի կարի ֆաբրիկա	հատ	5496	329760	60	ք. Երևան	60	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև

			ՍՊԸ							
23	35811190/1	**ՈՒսադիր**	Բանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	զույգ	13998	419940	30	ք. Երևան	30	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 30.10.2020թ.
24	35811190/2	**ՈՒսադիր**	Բանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ	զույգ	1998	2415582	1209	ք. Երևան	1209	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 30.10.2020թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1	**Կիսավերարկու՝** **Վերարկու ձմեռային՝** մուգ կապույտ մահուդե կտորից (537գ/մք խտությամբ, 90% բուրդ, 10% Պ/Ա), ձևվածքն ունի կիպ նստած ուրվագիծ, օձիքը ծալովի է, հետնամասի ներքևում՝ բացվածքով: Վերարկուն միակոճկուն է՝ դեպի աջ կոճկումով, կոճկվում է չորս կոճակ օղակներով և գաղտնի կոճկվածքով: Թևքերը՝ երկկարանի, ներկարված: Աստառը՝ մետաքսյա (8-C5-ԲՍ արտիկուլի մուգ կապույտ), վերարկուի առաջամասի և հետևամասի աստառները մգդակարված են մեմբրանե տաքացուցիչով, երկու կողմերում՝ ներսից, ունի ծոցագրպաններ, երկու կողքերից գրպանները՝ ներկարովի՝ մշակված քառանկյուն կափույրներով, երկարությունը մինչև ծնկները:
2	**Կիսավերարկու՝** **Վերարկու ձմեռային կին դատ. համար՝** մուգ կապույտ մահուդե կտորից (537գ/մք խտությամբ, 90% բուրդ, 10% Պ/Ա), ձևվածքն ունի կիպ նստած ուրվագիծ, օձիքը ծալովի է, հետնամասի ներքևում՝ բացվածքով: Վերարկուն դեպի ձախ կոճկումով կոճկվում է չորս կոճակ օղակներով և գաղտնի կոճկվածքով: Թևքերը՝ երկկարանի, ներկարված: Աստառը՝ մետաքսյա (8-C5-ԲՍ արտիկուլի մուգ կապույտ), վերարկուի առաջամասի և հետևամասի աստառները մգդակարված են մեմբրանե տաքացուցիչով, ձախ կողմում՝ ներսից, ունի ծոցագրպան, երկու կողքերից գրպանները՝ ներկարովի՝ մշակված քառանկյուն կափույրներով, երկարությունը մինչև ծնկները:
3	**Անջրանցիկ վերարկու՝** **Անձրևանոց՝** մուգ կապույտ կտորից (214գ/մք խտությամբ, 51% Պ/Է, 49% բամբակ), անջրաթափանց, միակոճկուն՝ դեպի աջ կոճկումով, օձիքը՝ ծալովի, մեջքամասը՝ առանց կտրվածքի: Լանջափեշերը կոճկվում են հինգ կոճակ օղակներով և գաղտնի կոճկվածքով, լանջափեշերի վրա վերևից թեք շերտիկավոր ներկարված գրպաններ: Աստառը՝ մետաքսյա, 8-C5-ԲՍ արտիկուլի մուգ կապույտ: Թիկունքը և առաջամասը՝ ուղիղ ուրվագծով, անձրևանոցի երկարությունը մինչև ծնկները:
4	**Անջրանցիկ վերարկու՝** **Անձրևանոց կին դատ. համար՝** մուգ կապույտ կտորից (214գ/մք խտությամբ, 51% Պ/Է, 49% բամբակ), անջրաթափանց, միակոճկուն՝ դեպի ձախ կոճկումով, օձիքը՝ ծալովի, մեջքամասը՝ առանց կտրվածքի: Լանջափեշերը կոճկվում են հինգ կոճակ օղակներով և գաղտնի կոճկվածքով, լանջափեշերի վրա վերևից թեք շերտիկավոր ներկարված գրպաններ: Աստառը՝ մետաքսյա, 8-C5-ԲՍ արտիկուլի մուգ կապույտ: Թիկունքը և առաջամասը ուղիղ ուրվագծով, անձրևանոցի երկարությունը մինչև ծնկները:
6	**Կիտել-կիսաշրջազգեստ՝** **Կիտել ամենօրյա կանացի՝** (կտորը մուգ կապույտ՝ 166գ/մք խտությամբ, 60% բուրդ, 40% Պ/Է) մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, կարանովի թիկնամասով, հետծալված օձիքով, օձիքի եզրերը մշակված են մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրագծով, օձիքի միացման կարում մշակված կախիչ, սովորական երկկարանի թևքերով, թևքերի վրա մշակված են ծալքեր (մանժետներ), որոնց վերին եզրերը կարված են մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրագծով, իսկ թևքածալքերի հետնամասում տեղադրված են երկուական Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով 14 մմ ոսկեգույն մետաղյա համաձուլվածքից կոճակներ: Կիտելը կողքերից ունի կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպաններ: Կիտելը միակոճկուն է, դեպի ձախ կոճկումով՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշի

	պատկերով միաշարք երկու ոսկեգույն մետաղյա համաձուլվածքից կոճակներով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտ[illegible] կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ, օձիք կրկնակարվում են [illegible] կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 8-C5-ԲՍ արտիկուլի մուգ կապույտ կտորից: Ձախ թևքին կարվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով թևքանշան: Դատախազների կիտելի աջ և ձախ օձիքների վրա ամրացվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով տարբերանշան: Հայաստանի Հանրապետության դատախազների դասային աստիճանների տարբերանշանները ուսադիրներն են՝ կարվում են կիտելի աջ և ձախ ուսակարերի վրա: **Կիսաշրջազգեստ ամենօրյա՝** մուգ կապույտ կիսաբրդյա (166գ/մք խտությամբ, 60% բուրդ, 40% Պ/Է) կտորից ուղիղ կարվածքով է, երկկողմանի սեղմոններով, աստառով (աստառը՝ մետաքսյա, 8-C5-ԲՍ արտիկուլի մուգ կապույտ), գոտին՝ գոտեմակօղերով, հետևամասում՝ բացվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով:
7	**Կիտել-կիսաշրջազգեստ՝** **Կիտել տոնական սպիտակ կանացի՝** (կտորը սպիտակ՝ 310գ/մք խտությամբ, 65% բուրդ, 35% Պ/Է) մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, կարանովի թիկնամասով, հետծալված օձիքով, օձիքի եզրերը մշակված են մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրագծով, օձիքի միացման կարում մշակված կախիչ, սովորական երկկարանի թևքերով, թևքերի վրա մշակված են ծալքեր (մանժետներ), որոնց վերին եզրերը կարված են մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրագծով, իսկ թևքածալքերի հետնամասում տեղադրված են երկուական Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով 14 մմ ոսկեգույն մետաղյա համաձուլվածքից կոճակներ: Կիտելը կողքերից ունի կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպաններ: Կիտելը միակոճկուն է, դեպի ձախ կոճկումով՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշի պատկերով միաշարք երկու ոսկեգույն մետաղյա համաձուլվածքից կոճակներով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ, օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 8-C5-ԲՍ արտիկուլի մուգ կապույտ կտորից: Ձախ թևքին կարվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով թևքանշան: Դատախազների կիտելի աջ և ձախ օձիքների վրա ամրացվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով տարբերանշան: Հայաստանի Հանրապետության դատախազների դասային աստիճանների տարբերանշանները ուսադիրներն են՝ կարվում են կիտելի աջ և ձախ ուսակարերի վրա: **Կիսաշրջազգեստ տոնական՝** մուգ կապույտ կիսաբրդյա (166գ/մք խտությամբ, 60% բուրդ, 40% Պ/Է) կտորից ուղիղ կարվածքով է, երկկողմանի սեղմոններով, աստառով (աստառը՝ մետաքսյա, 8-C5-ԲՍ արտիկուլի մուգ կապույտ), գոտին՝ գոտեմակօղերով, հետևամասում՝ բացվածքով, կողամասում կոճկվում է մեկ կոճակով և շղթայով:
8	**Տաբատներ՝** **Տաբատ բարձրագույն դասի՝** (կտորը մուգ կապույտ՝ 166գ/մք խտությամբ, 70% բուրդ, 30% Պ/Է) ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի (մանժետների), 2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրակարից 0,5 սմ հեռավորությամբ ձգվում է երկու մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից վրակարվածք՝ 2,2 սմ լայնությամբ շերտով, տաբատի կողքի կարի ամբողջ երկայնքով, գոտին գոտեմակօղերով, կոճկվում է մետաղյա ամրակով, մեկ կոճակով և շղթայով, արտաքին գրպանները թեք են (կողային), հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով գրպան:
10	**Կիտել-տաբատ՝** **Կիտել ամենօրյա բարձրագույն դասի՝** (կտորը մուգ կապույտ՝ 166գ/մք խտությամբ, 70% բուրդ, 30% Պ/Է) մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, կարանովի թիկնամասով և փողքերի երկու կողային կտրվածքով, հետծալված օձիքով, օձիքի եզրերը մշակված են մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրագծով, օձիքի միացման կարում մշակված կախիչ, սովորական երկկարանի թևքերով, թևքերի վրա մշակված են ծալքեր (մանժետներ), որոնց վերին եզրերը կարված են մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրագծով, իսկ թևքածալքերի հետնամասում տեղադրված են երեքական Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով 14 մմ ոսկեգույն մետաղյա համաձուլվածքից կոճակներ: Կիտելը կողքերից ունի կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպաններ: Կիտելը միակոճկուն է՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշի պատկերով միաշարք երեք ոսկեգույն մետաղյա համաձուլվածքից կոճակներով: Կիտելը

	առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալներ՝ գրպանների կափույրներ,օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 8-C5-ԲԱՅ արտիկուլի մուգ կապույտ կտորից: Ձախ թևքին կարվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով թևքանշան: Դատախազների կիտելի աջ և ձախ օձիքների վրա ամրացվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով տարբերանշան: Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների կիտելի աջ և ձախ օձիքների վրա ասեղնագործվում է ոսկեգօծ դափնու ճյուղերով զարդանախշ: Հայաստանի Հանրապետության դատախազների դասային աստիճանների տարբերանշանները ուսադիրներն են՝ կարվում են կիտելի աջ և ձախ ուսակարերի վրա: Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների կիտելի բոլոր կոճակները Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով են: **Տաբատ ամենօրյա բարձրագույն դասի՝** (կտորը մուգ կապույտ՝ 166գ/մք խտությամբ, 70% բուրդ, 30% Պ/Է) ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի (մանժետների), 2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրակարից 0,5 սմ հեռավորությամբ ձգվում է երկու մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից վրակարվածք՝ 2,2 սմ լայնությամբ շերտով, տաբատի կողքի կարի ամբողջ երկայնքով, գոտին գոտեմակօղերով, կոճկվում է մետաղյա ամրակով, մեկ կոճակով և շղթայով, արտաքին գրպանները թեք են (կողային), հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով գրպան:
11	**Կիտել-տաբատ՝** **Կիտել տոնական՝** (կտորը սպիտակ 310գ/մք խտությամբ, 65% բուրդ, 35% Պ/Է) մարմինը կիսագրկող մակերեսով, հաստ փողքերով, կարանովի թիկնամասով և փողքերի երկու կողային կտրվածքով, հետծալված օձիքով, օձիքի եզրերը մշակված են մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրագծով, օձիքի միացման կարում մշակված կախիչ, սովորական երկկարանի թևքերով, թևքերի վրա մշակված են ծալքեր (մանժետներ), որոնց վերին եզրերը կարված են մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրագծով, իսկ թևքածալքերի հետնամասում տեղադրված են երեքական Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով 14 մմ ոսկեգույն մետաղյա համաձուլվածքից կոճակներ: Կիտելը կողքերից ունի կափույրով ծածկվող կտրվածքով ներկարված գրպաններ, երկու կողմերում ունի ծոցագրպաններ: Կիտելը միակոճկուն է՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշի պատկերով միաշարք երեք ոսկեգույն մետաղյա համաձուլվածքից կոճակներով: Կիտելը առաջամասից կրկնակարվում է սոսնձող կտորով, իսկ կրծքամասում՝ սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Առանձին դետալները նույնպես՝ գրպանների կափույրներ,օձիք կրկնակարվում են սոսնձող կտորով և վուշ-բրդյա քաթանով: Աստառը՝ 8-C5-ԲԱՅ արտիկուլի մուգ կապույտ կտորից: Ձախ թևքին կարվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով թևքանշան: Դատախազների կիտելի աջ և ձախ օձիքների վրա ամրացվում է Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշով տարբերանշան: Հայաստանի Հանրապետության դատախազների դասային աստիճանների տարբերանշանները ուսադիրներն են՝ կարվում են կիտելի աջ և ձախ ուսակարերի վրա: **Տաբատ տոնական՝** (կտորը մուգ կապույտ՝ 166գ/մք խտությամբ, 60% բուրդ, 40% Պ/Է) ուրվագիծը՝ ուղիղ, առանց ծալքերի (մանժետների), 2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր (բորդո) մահուդե կտորից եզրակարով, գոտին գոտեմակօղերով, կոճկվում է մետաղյա ամրակով, մեկ կոճակով և շղթայով, արտաքին գրպանները թեք են (կողային), հետևամասի աջ կողմում՝ կոճակով կոճկվող կափույրով գրպան:
12	**Վերնաշապիկներ՝** **Վերնաշապիկ երկարաթև՝** սպիտակ կտորից (180գ/մք խտությամբ, 33% բնական վիսկոզա, 67% Պ/Է), ծալովի օձիքով (փափուկ կամ կոշտ), վերնաշապիկի օձիքի անկյուններում տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Վերնաշապիկի հետևամասը՝ վերին կտրվածքով, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, կոճկվում է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով, թևքերը՝ երկար, կոճակով կոճկվող թեզանիքներով:
13	**Վերնաշապիկներ՝** **Վերնաշապիկ երկարաթև կին դատ. համար՝** սպիտակ կտորից (180գ/մք խտությամբ, 33% բնական վիսկոզա, 67% Պ/Է կտորից) ծալովի օձիքով (փափուկ կամ կոշտ), վերնաշապիկի օձիքի անկյուններում տեղադրված են պլաստիկ ներդիրներ: Վերնաշապիկի հետևամասը՝ վերին կտրվածքով, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, դեպի ձախ կոճկումով, կոճկվում է 8 կոճակով, աջ կտրվածքը՝ շերտակարով, թևքերը՝ երկար, կոճակով կոճկվող թեզանիքներով:
14	**Վերնաշապիկներ՝** **Վերնաշապիկ կարճաթև՝** սպիտակ կտորից է (180գ/մք խտությամբ, 33% բնական վիսկոզա, 67% Պ/Է), ծալովի օձիքով, կրծքամասում՝ կոճակով կոճկվող

	ձևավոր կափույրով և շերտակարով վրադիր գրպաններ, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, հետևամասը՝ վերին կտրվածքը՝ է 8 կոճակով, ձախ կտրվածքը՝ շերտակարով, թևքերը՝ կարճ՝ շերտակարով, ուղիղ թևքածալերով, ձախ թևքին կարվում է << դատախազության խորհրդանշանով թևքանշան: Թևքանշանը վահանաձև է, երիզված մուգ կարմիր (բորդո) 2 մմ երիզով, Հայաստանի Հանրապետության խորհրդանիշի պատկերով՝ 11 սմ x 7.5 սմ մուգ կապույտ ֆոնի վրա: Թևքանշանը կրում են ձախ թևքի արտաքին կողմին, թևքի վերին կետից մինչև նշանը՝ 90 մմ հեռավորությամբ: Ուսերին՝ գոտեմակօղեր՝ ուսադիրների համար:
15	**Վերնաշապիկներ՝** **Վերնաշապիկ կարճաթև կին դատ. համար՝** սպիտակ կտորից է (180գ/մք խտությամբ, 33% բնական վիսկոզա, 67% Պ/Է), ծալովի օձիքով, կրծքամասում՝ կոճակով կոճկվող ձևավոր կափույրով և շերտակարով վրադիր գրպաններ, ուղիղ գոտիով, կարագծերին էլաստիկ ժապավեններ, հետևամասը՝ վերին կտրվածքով, դեպի ձախ կոճկումով, կոճկվում է 8 կոճակով, աջ կտրվածքը՝ շերտակարով, թևքերը՝ կարճ՝ շերտակարով, ուղիղ թևքածալերով, ձախ թևքին կարվում է << դատախազության խորհրդանշանով թևքանշան: Թևքանշանը վահանաձև է, երիզված մուգ կարմիր (բորդո) 2 մմ երիզով, Հայաստանի Հանրապետության խորհրդանիշի պատկերով՝ 11 սմ x 7.5 սմ մուգ կապույտ ֆոնի վրա: Թևքանշանը կրում են ձախ թևքի արտաքին կողմին, թևքի վերին կետից մինչև նշանը՝ 90 մմ հեռավորությամբ: Ուսերին՝ գոտեմակօղեր՝ ուսադիրների համար:
16	**Շարֆեր՝** **Վզարկու՝** վերարկուի օձիքի տակից օգտագործվող, մուգ կապույտ տրիկոտաժե գործվածքից (100% բամբակ), լայնքը 24սմ, երկարությունը 120սմ:
17	**Փողկապներ՝** **Փողկապ՝** մուգ կապույտ գույնի (35% բուրդ, 65% Պ/Է, 209 գր/քմ խտությամբ), ունի լայնացած ուրվագծով ձևվածք, պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում՝ սուր անկյունով, վերևում՝ հավաքովի հանգույց: Փողկապի վրա ասեղնագործված է Հայաստանի Հանրապետության զինանշան:
18	**Փողկապներ՝** **Փողկապ բարձրագույն դասի՝** մուգ կապույտ գույնի (35% բուրդ, 65% Պ/Է, 209 գր/քմ խտությամբ), ունի լայնացած ուրվագծով ձևվածք, պատրաստի տեսքն ավարտվում է ներքևում՝ սուր անկյունով, վերևում՝ հավաքովի հանգույց: Փողկապի վրա ասեղնագործված է Հայաստանի Հանրապետության զինանշան ոսկեգօծ թելով:
19	**Փողկապներ՝** **Փողկապ կին դատ. համար՝** մուգ կապույտ (35% բուրդ, 65% Պ/Է, 209 գր/քմ խտությամբ) կտորից, երկու շեղանկյունաձև՝ լայն, կարճ և նեղ, երկարավուն կտորներից, որի նեղ, երկարավուն կտորը գտնվում է լայն, կարճ կտորի վրա, հանգույցի ներքևի կենտրոնական մասում ասեղնագործված է Հայաստանի Հանրապետության զինանշանը:
20	**Գոտիներ՝** **Գոտի՝** կաշվե, սև, 50 մմ լայնությամբ, միաանցք, մետաղյա ճարմանդով, ճարմանդը՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով, անհատական չափերով:
21	**Գոտիներ՝** **Գոտի բարձրագույն դասի՝** սև, 50 մմ լայնությամբ միաանցք, մետաղյա ճարմանդով, ճարմանդը՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով, անհատական չափերով, պատրաստված բարձրակարգ կաշվից:
22	**Գոտիներ՝** **Գոտի կին դատ. համար՝** կաշվե, սև, 30 մմ լայնությամբ, միաանցք, մետաղյա ճարմանդով, ճարմանդը՝ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով, անհատական չափերով:
23	**ՈՒսադիր՝** **Ուսադիրներ բարձրագույն դասի՝** Հայաստանի Հանրապետության դատախազների դասային աստիճանների տարբերանշաններն ուսադիրներն են, որոնք լինում են՝ 1) կարովի (կիտելի), տեղադրվում են թևքատեղադրման գծից ուսի կարի վրա այնպես, որ ուսի կարը համընկնի ուսադրի երկայնական առանցքային

	գծի հետ, 2) հանովի (կարճաթև վերնաշապիկի վրա), ամրացվում են ուսերի գոտեմակօղերին: Ուսադիրը կիսափափուկ, ձգված վեցանկյուն է, երկարավուն զուգահեռ կողմերով, որոնց ներքևի վերջնամասն ուղղանկյուն է: Ուսադիրները մուգ կարմիր մահուդի վրա մշակված մուգ կապույտ գույնի նախշազարդ դաշտով են, եզրերը մուգ կարմիր գույնի մակաշերտով: Կարովի ուսադրի եզրերը, բացի ստորինից, երիզվում են 2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր մահուդե գործվածքով: Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների ուսադիրներին ոսկեգույն աստղերը ասեղնագործվում են ոսկեզօծ թելով, իսկ վերին ծայրից 15 մմ հեռավորության վրա տեղադրվում է 14 մմ տրամագծով ոսկեգույն կոճակ Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով: Դատախազների դասային աստիճանների տարբերանշանները (ուսադիրներ) տեղադրվում են (կարվում են) կիտելի, վերնաշապիկի աջ և ձախ ուսակարերի վրա: Արդարադատության պետական խորհրդականի ուսադիրների վրա ասեղնագործվում է ոսկեզօծ հնգաթև աստղ՝ 25 մմ տրամագծով՝ աստղի թևերի միջև ասեղնագործված յոթական ճառագայթներով: Արդարադատության 1-ին դասի պետական խորհրդականի ուսադիրների վրա ասեղնագործվում է 3 ուռուցիկ ոսկեգույն հնգաթև աստղ՝ յուրաքանչյուրը 22 մմ տրամագծով, արդարադատության 2-րդ դասի պետական խորհրդականի ուսադիրների վրա՝ 2 ուռուցիկ ոսկեգույն հնգաթև աստղ՝ յուրաքանչյուրը 22 մմ տրամագծով, արդարադատության 3-րդ դասի պետական խորհրդականի ուսադիրների վրա՝ մեկ ուռուցիկ ոսկեգույն հնգաթև աստղ՝ 22 մմ տրամագծով: Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների ուսադիրներին աստղերը տեղադրվում են երկայնակի առանցքային գծի վրա: Աստղերը ճառագայթներից մեկով ուղղված են դեպի ուսադիրների վերին եզրը: Բարձրագույն դասային աստիճան ունեցող դատախազների համազգեստի բոլոր տարբերանշաններն ասեղնագործվում են 5-տոկոսանոց ոսկեթելերով:
24	**ՈՒսադիր՝** **Ուսադիրներ՝** Հայաստանի Հանրապետության դատախազների դասային աստիճանների տարբերանշաններն ուսադիրներն են, որոնք լինում են՝ 1) կարովի (կիտելի), տեղադրվում են թևքատեղադրման գծից ուսի կարի վրա այնպես, որ ուսի կարը համընկնի ուսադրի երկայնական առանցքային գծի հետ, 2) հանովի (կարճաթև վերնաշապիկի վրա), ամրացվում են ուսերի գոտեմակօղերին: Ուսադիրը կիսափափուկ, ձգված վեցանկյուն է, երկարավուն զուգահեռ կողմերով, որոնց ներքևի վերջնամասն ուղղանկյուն է: Ուսադիրները մուգ կարմիր մահուդի վրա մշակված մուգ կապույտ գույնի նախշազարդ դաշտով են, եզրերը մուգ կարմիր գույնի մակաշերտով: Կարովի ուսադրի եզրերը, բացի ստորինից, երիզվում են 2,5 մմ լայնությամբ մուգ կարմիր մահուդե գործվածքով: Ուսադիրներին, ըստ դասային աստիճանի, տեղադրվում են մետաղե ոսկեգույն աստղեր, իսկ վերին ծայրից 15 մմ հեռավորության վրա տեղադրվում է 14 մմ տրամագծով ոսկեգույն կոճակ՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշի պատկերով: Դատախազների դասային աստիճանների տարբերանշանները (ուսադիրներ) տեղադրվում են (կարվում են) կիտելի, վերնաշապիկի աջ և ձախ ուսակարերի վրա: Արդարադատության 1-ին, 2-րդ, 3-րդ դասերի խորհրդականների ուսադիրների վրա 2 մուգ կարմիր մակաշերտ է: Արդարադատության 1-ին դասի խորհրդականի ուսադիրներին ամրացվում է 3 ոսկեգույն հնգաթև աստղ՝ յուրաքանչյուրը 20 մմ տրամագծով, արդարադատության 2-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ 2 հնգաթև ոսկեգույն աստղ՝ յուրաքանչյուրը 20 մմ տրամագծով, արդարադատության 3-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ մեկ հնգաթև աստղ՝ 20 մմ տրամագծով: 1-ին, 2-րդ, 3-րդ դասերի խորհրդականների ուսադիրների վրա՝ մեկ մուգ կարմիր մակաշերտ է: 1-ին դասի խորհրդականի ուսադիրներին ամրացվում է 4 ոսկեգույն աստղ՝ յուրաքանչյուրը 14 մմ տրամագծով, 2-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ 3 ոսկեգույն աստղ՝ յուրաքանչյուրը 14 մմ տրամագծով, 3-րդ դասի խորհրդականի ուսադիրներին՝ 2 ոսկեգույն աստղ՝ յուրաքանչյուրը 14 մմ տրամագծով: Ուսադիրներին աստղերը տեղադրվում են՝ 1) արդարադատության 1-ին դասի խորհրդականի համար՝ երկու ներքևի աստղերը մակաշերտի վրա, իսկ երրորդը՝ առաջին երկուսից բարձր, երկայնակի առանցքային գծի վրա.

	2) արդարադատության 2-րդ դասի խորհրդականի համար՝ մակաշերտի վրա. 3) արդարադատության 3-րդ դասի խորհրդականի համար՝ երկայնակի առանցքային գծի վրա. 4) 1-ին դասի խորհրդականի համար՝ երկու ներքևի աստղերը դաշտի կենտրոնում, երրորդը և չորրորդը՝ առաջին երկուսից բարձր, մակաշերտի վրա 5) 2-րդ դասի խորհրդականի համար՝ դաշտի կենտրոնում. 6) 3-րդ դասի խորհրդականի համար՝ մակաշերտի վրա: Աստղերը ճառագայթներից մեկով ուղղված են դեպի ուսադիրների վերին եզրը:

ıացուցիչ պայմաններ՝ *ընդհանուր պայմաններին ծանոթանալու համար օգտվել '' ԴԱՏԱԽԱՁՆԵՐԻ ՀԱՄԱՁԳԵՍՏԻ, ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ, :ԱԽԱՁՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՄԱՁԳԵՍՏԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 441-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ՝ ՀՀ կառավարության 09.07.2020թ N-1158-Ն*

ման դրույթներից:

1. Մատակարարը պարտավոր է հանդերձանքի գործվածքները, գույնը և նախնական տեսքը համաձայնացնել Պատվիրատուի հետ:
2. Պահանջվում է անհատական կար յուրաքանչյուր դատախազի համար՝ համապատասխան չափի և ձևի ուսադիրների ամրացմամբ:
3. Մատակարարը պարտավոր է յուրաքանչյուր դատախազի համազգեստի չափերը վերցնել ՀՀ դատախազության համապատասխան ստորաբաժանումներում (ք. Երևան):
4. Կարված համազգեստի ցանկացած բաղադրիչի չափս ենթակա է փոփոխման կարողի կողմից տարվա ընթացքում:

ıդերձանքը պետք է ունենա փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու ıեթիվը, տեսականու անվանումը և դատախազի անուն ազգանունը:

ıանքը պետք է լինի չօգտագործված: Ապրանքների մատակարարումը իրականացնում է մատակարարը՝ ըստ պատվիրատուի նշված հացեների:

ԳՆՈՐԴ

ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ
ք. Երևան, Զ. Սարկավագի 157
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554

/ստորագրություն/
Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

...րով ...տեսվ ...ծ ...րաժն ...մարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**						
			III եռամսյակ			IV եռամսյակ			Ընդամենը
			հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
	18211100/1	Կիսավերարկու	-	-	-	4980000.0	4980000.0	4980000.0	**4980000.0**
2	18211100/2	Կիսավերարկու	-	-	-	1014000.0	1014000.0	1014000.0	**1014000.0**
3	18221400/1	Անջրանցիկ վերարկու	-	-	-	2490000.0	2490000.0	2490000.0	**2490000.0**
4	18221400/2	Անջրանցիկ վերարկու	-	-	-	510000.0	510000.0	510000.0	**510000.0**
6	18231210/1	Կիտել-կիսաշրջազգեստ	-	-	-	2700000.0	2700000.0	2700000.0	**2700000.0**
7	18231210/2	Կիտել-կիսաշրջազգեստ	-	-	-	849966.0	849966.0	849966.0	**849966.0**
8	18231400/1	Տաբատներ	-	-	-	169980.0	169980.0	169980.0	**169980.0**
10	18231410/2	Կիտել-տաբատ	-	-	-	900000.0	900000.0	900000.0	**900000.0**
11	18231410/3	Կիտել-տաբատ	-	-	-	4149834.0	4149834.0	4149834.0	**4149834.0**
12	18331200/1	Վերնաշապիկներ	-	-	-	3468612.0	3468612.0	3468612.0	**3468612.0**
13	18331200/2	Վերնաշապիկներ	-	-	-	559776.0	559776.0	559776.0	**559776.0**
14	18331200/3	Վերնաշապիկներ	-	-	-	3123000.0	3123000.0	3123000.0	**3123000.0**
15	18331200/4	Վերնաշապիկներ	-	-	-	504000.0	504000.0	504000.0	**504000.0**
16	18421110/1	Շարֆեր	-	-	-	249600.0	249600.0	249600.0	**249600.0**
17	18421120/1	Փողկապներ	-	-	-	1199814.0	1199814.0	1199814.0	**1199814.0**
18	18421120/2	Փողկապներ	-	-	-	27984.0	27984.0	27984.0	**27984.0**

9	18421120/3	Փողկապներ	-	-	-	195888.0	195888.0	195888.0	[illegible]
0	18421170/1	Գոտիներ	-	-	-	1885128.0	1885128.0	1885128.0	1885128.0
1	18421170/2	Գոտիներ	-	-	-	39984.0	39984.0	39984.0	39984.0
2	18421170/3	Գոտիներ	-	-	-	329760.0	329760.0	329760.0	329760.0
3	35811190/1	ՈՒսադիր	-	-	-	419940.0	419940.0	419940.0	419940.0
4	35811190/2	ՈՒսադիր	-	-	-	2415582.0	2415582.0	2415582.0	2415582.0
	ԸՆԴԱՄԵՆԸ		-	-	-	32182848.0	32182848.0	32182848.0	32182848.0

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ԳՆՈՐԴ
ՀՀ դատախազություն
ք.Երևան, Վ.Սարգսյան 5
ՀՀ ֆին. նախ.աշխ.գործ.վարչ.
Հ/Հ 900011180081
ՀՎՀՀ 02506634

/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ
ք. Երևան, Զ. Սարկավագի 157
«Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510023294810100
ՀՎՀՀ 00803554

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«24» սեպտեմբերի 2020 թ. կնքված
N ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/11-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«24» սեպտեմբերի 2020 թ. կնքված
N ՀԳԴ-ԳՀԱՊՁԲ-20/11-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն